ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Սույն համաձայնությունը կնքված է (նշել օրը, ամիսը,տարին)

……

[Կողմ 1]

……

……

և

[Կողմ 2]

……

……

միջև

(այսուհետ միասին՝ «Կողմեր»)

Սույն համաձայնության Կողմերը կնքում են համաձայնություն հետևյալի մասին.

Հաշտարարությունը

1. Կողմերը համաձայնում են բարեխղճորեն լուծել իրենց վեճը [*տեղեկություններ այն իրավահարաբերության վերաբերյալ, որից բխող վեճը պետք է լուծվի հաշտարարությամբ, կամ վեճի առարկան*]: Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնում (Կենտրոն):
2. Կողմերը համաձայնում են մասնակցել Կենտրոնում իրականացվող հաշտարարությանը՝ համաձայն Կենտրոնի Հաշտարարության կանոնների:

Իրավասություն և կարգավիճակ

3. Յուրաքանչյուր կողմի անունից սույն Համաձայնագիրը ստորագրող անձը հաստատում է իր իրավասությունը՝ իրավաբանորեն պարտավորեցնելու այդ կողմին և հաշտարարության ընթացքում ամբողջությամբ կամ մասնակիորեն այդ կողմը ներկայացնող բոլոր այլ անձանց պահպանելու սույն Համաձայնագրի պայմանները: Նրանք նաև հավաստում ցանկացած հաշտության պայման այդ կողմին պարտավորեցնելու իրավասությունը:
4. Կենտրոնը և Կենտրոնի կողմից նշանակված հաշտարարը պատասխանատվություն չեն կրում Կողմերի առջև հաշտարարության հետ կապված որևէ գործողության կամ անգործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ հաստատված է, որ տվյալ գործողությունը կամ անգործությունը խարդախություն է կամ ներառում է դիտավորությամբ կատարված արարք:

Գաղտնիությունը

5. Բոլոր գրավոր և բանավոր հաղորդակցությունները, որոնք տեղի են ունենում հաշտարարության գործընթացի ժամանակ, առավելագույնս գաղտնի են:
   Ըստ այդմ.

4.1. Սույն համաձայնագրի Կողմերը փոխադարձաբար պարտավորվում են չբացահայել այս հաշտարարության ընթացքում փոխանակված բոլոր հաղորդակցությունները և փաստաթղթերը այն անձանց, ովքեր այս հաշտարարության կողմ չեն, եթե այլ բան նախատեսված չէ Կենտրոնի Հաշտարարության կանոններով:

5. Սույն համաձայնագրի Կողմերը պարտավորվում են հաշտարարության ընթացքում բոլոր հաղորդակցություններին և ներկայացված փաստաթղթերին վերաբերվել առանց նախապաշարումների: Նման տեղեկատվությունը չպետք է օգտագործվի ուսումնասիրությունների, խաչաձև հարցաքննության, դատավարության կամ որևէ այլ իրավական գործընթացում, ինչպես տվյալ գործով, այնպես էլ որևէ այլ հարցում:

6. Սույն փաստաթղթի յուրաքանչյուր ստորագրող, անկախ նրանից, թե նրանք դատավարության անմիջական կողմ են, թե ոչ, համաձայնում են պահպանել սույն համաձայնագրում նշված կամ Կենտրոնի Հաշտարարության կանոններով պահանջվող գաղտնիության դրույթները: Ցանկացած անձ, ով ստորագրում է կազմակերպության անունից, հավաստում է, որ իրավասու է պարտավորեցնել կազմակերպությանը պահպանել սույն փաստաթղթում նշված գաղտնիության պայմանները:

Հաշտության ձևակերպումը

7. Հաշտարարության ընթացքում ձեռք բերված հաշտության համաձայնության ոչ մի պայման իրավական պարտադիր ուժ չունի, քանի դեռ դրանք գրավոր ամրագրված չեն և ստորագրված չեն Կողմերից յուրաքանչյուրի կողմից կամ վերջիններիս անունից:

Հաշտարարության ծախսերն ու վճարները

8. Կողմերը պատասխանատու են ծախսերի և վճարների համար՝ համաձայն սույն Համաձայնագրի կնքման պահին ուժի ունեցող Կենտրոնի Հաշտարարության կանոնների Հավելվածի:

Հաշտարարության իրավական կարգավիճակը և ազդեցությունը

9. Սույն Համաձայնագիրը ենթակա է [Հայաստանի Հանրապետության] օրենքներին, և սույն Համաձայնագրից բխող կամ դրա հետ կապված ցանկացած հարց լուծելու իրավազորությունը պատկանում է Կենտրոնին:

Ստորագրված է

Կողմ 1

……

[Ստորագրություն, անուն-ազգանուն]

Կողմ 2

……

[Ստորագրություն, անուն-ազգանուն]

ք. Երևան, Արշակունյաց պող. 51, 0026
Phone: +374 (0)11 201 410
էլ. փոստ՝ info@amca.am կայք՝ www.amca.am